նոյ...»[31]։ Պետք է ենթադրել, որ Սիմեոն բժիշկը եղել է Մխիթարի ժամանակակիցը, կամ ապրել է նրանից անմիջապես հետո (XII դ. վերջ—XIII դարի սկիզբ)։ Անպայման մեծ համարում ունեցած այդ բժշկի անունը հիշատակվում է Մատենադարանի հայերեն բժշկարաններից մեկում, ուր ոսկրային զանազան հիվանդությունների բուժման համար առաջարկվող մի դեղատոմս կա նրա անունով. «Մաչում Սիմէօնի, որ օգտէ կուզութեան և ամէն ոսկրացաւութեան»[32]։

Մինչև XV դարը ստեղծագործած հայ բժիշկների անհայտ աշխատություններից մնացած վերոհիշյալ պատառիկները ավելի են ամրոզջացնում միջնադարյան հայ բժշկագիտության պատկերը, մեկ անգամ ևս հավաստելով, որ միջնադարում՝ առանձնապես X—XIV դդ. Հայաստանում բժշկագիտությունը վերելք է ապրել, ստեղծվել են նշանակալից աշխատություններ, որոնք բուն ամենայնի նպաստել են հայ բժշկագիտական մտքի զարգացմանը։

Դ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՇԵԴԴԱԴՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան հազվագյուտ դրամների թվին են պատկանում Շեդդադյան ամիրաների դրամները։

Նյութերի բացակայության պատճառով մինչև վերջերս հնարավոր չէր խոսել Հայաստանում շեդդադյան դրամների շրջանառության մասին։ Սակայն ներկայումս նոր դրամագիտական վկայությունները թույլ են տալիս նշելու, որ ՍՍՀ տարածքի վրա արդեն ի հայտ են եկել Շեդդադյան հարստության հետևյալ դրամները։

1. Դիրհեմ, թողարկված Շեդդադյան ամիրա Ֆադլ I իբն Մուհամմեդի (հիջրայի 375—422 թթ.=մ. թ. 985—1031 թթ.) և Աբբասյան խալիֆա ալ-Կադիր Բիլլահի (հիջրայի 381—422 թթ.=մ. թ. 991—1031 թթ.) անունների հիշատակությամբ։

XI դարում հայկական շուկաներում, մասնավորապես Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում, բացի բյուզանդական դրամներից, որոնք այնքան հաճախ են գտնվում, տարածված են եղել նաև շեդդադյան դրամները։ Հայկական

2. Դիրհեմ, թողարկված Շեդդադյան ամիրա Ալի իբն Մուսա Լաշկարի II-ի (հիջրայի 425—440 թթ.=մ. թ. 1034—1049 թթ.) և Աբբասյան խալիֆա ալ-Կաիմ Բիամր ալլահի (հիջրայի 422—467 թթ. =մ. թ. 1031—1075 թթ.) անունների հիշատակությամբ։

3. Դիրհեմ, թողարկված Շեդդադյան ամիրա Աբու-լ-Ասվար Շավուր իբն Ֆադլի (հիջրայի 441—459 թթ.=մ. թ. 1049—1067 թթ.) և Աբբասյան խալիֆա ալ-Կաիմ Բիամր ալլահի

31 Տե՛ս նույն տեղում։

32 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7304, էջ 76ա։

(հիջրայի 422—467 թթ.=մ. թ. 1031—1075 թթ.) անունների հիշատակությամբ։

Այդ բոլոր դրամների վրա արաբերեն քուֆի տառաձևերով (թեև դիտվում են նաև ոճական այլ տարբեր) դրոշմվել են ամիրաների տիտղոսներն ու անունները, ինչպես նաև մահմեդականության սունիի դավանանքի աղոթք դարձած խոսքերը, քաղված Ղուրանի 9-րդ գլխի 33-րդ և 61-րդ գլխի 9-րդ ոտանավորներից։ Դժբախտաբար դրամների վրա չեն պահպանվել նրանց թողարկման տարեթվերը և տեղանունները։ Մի քանի օրինակների վրա, հազիվ նշմարելի, ընթերցվում է Դանձակ քաղաքի արաբերեն դրված անունը։ Այդ քաղաքը եղել է շեդդադյան դրամների թողարկման գլխավոր կենտրոնը։ Շեդդադյանները թողարկել են միայն արծաթե դրամներ, ուրիշ մետաղներից շեդդադյան դրամներ դեռևս չեն հայտնաբերվել։ Սակայն արծաթն այդ դրամներն իրենց ձուլվածքի մեջ մոտ կիսով չափ պղինձ են պարունակել։ Արծաթի պակասությունը ճգնաժամային վիճակ էր ստեղծել արևելյան շատ երկրներում։ Շեդդադյան դրամները շրջանառության տեղական ոլորտից դուրս չեն անցել։ Եվ դա պատահականություն չէ, որովհետև արծաթի չնչին պարունակությամբ խիստ ցածր որակի այդ դիրհեմները չէին կարող միջազգային լայն ընդունելություն ունենալ։ Հայաստանի համար շեդդադյան դիրհեմները եղել են տեղական դրամական միավորներ և արտացոլում են Աղվանքի և Հայաստանի տնտեսական կապերի անմիջականությունը XI դարում։ Դրանց հայտնաբերումը Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում միանգամայն օրինաչափ է, եթե նկատի ունենանք, որ ավելի քան հարյուր տարի (971—1075 թթ.) Շեդդադյան ամիրաները եղել են Դվին և Դանձակ քաղաքների տերերը, իսկ այդ դինաստիայի մեկ ուրիշ ճյուղը 1072 թ. սելջուկյան սուլթան Ալփասլանից գնել էր Հայոց Անի քաղաքը, ուր մինչև XII դարի վերջն ընթացել է Անիի Շեդդադյանների՝ խոշոր ֆեոդալական այդ տան գործունեությունը։ Հատուկենտ օրինակներով շեդդադյան դրամներ գտնվել են Դվին քաղաքի ավերակներում։ Սակայն առավել կարևոր վկայություն է Հայկական ՍՍՀ Վարդենիսի շրջանի Վարդենիս քաղաքատիպ ավանում գտնված դրամական գանձը, բաղկացած 109 ամբողջական ու մի քանի կոտրված դրամներից, որոնք թողարկվել են Շեդդադյան ամիրաներ Ֆազլ I իբն Մուհամմեդի և Ալի իբն Մուսա Հաշկարի II-ի իշխանության տարիներին, ըստ որում վերջինիս անունով հայտնվել է միայն մեկ դրամ։ Դանձի քննությունը պարզել է, որ այն թաղվել է XI դարի երկրորդ կեսին։ Բագրատունյաց թագավորության ժամանակներում և հետագայում հենց այդտեղով, այսինքն Սևանին մոտ գտնվող այժմյան Վարդենիսի դրաղեցրած տարածքի միջով են անցել Դվին—Պարտավ, Դվին—Դանձակ առևտրական ճանապարհները։

Չափագիտական առումով շեդդադյան դրամները ներկայացնում են Անդրկովկասում թողարկված ամենածանր քաշի դրամական միավորները XI դարում։ Նրանց միջին կշռային չափը յուրաքանչյուր դիրհեմի համար կազմում է մոտ 4,50 գրամ։ Սակայն շեդդադյան դրամների ինչպես չափագիտության, այնպես էլ հնագիտության հարցերը առանձին քննություն առարկա են։

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

НОВОЕ В АРМЯНСКОМ И ОБЩЕМ ЯЗЫКОЗНАНИИ

В ряду трудов Г. Б. Джаукяна по армянскому, индоевропейскому и общему языкознанию одно из видных мест занимает недавно вышедшая в свет работа под названием «Основы теории современного армянского языка»[1]. Эта работа ученого представляется нам крупным вкладом в арменистику, но ее значение не ограничивается рамками армянского языкознания. В качестве существенной особенности книги следует отметить и то, что она содержит новые важные для общего языкознания положения. Новизна этих положений, как и сама арменоведческая сторона работы, безусловно требует пристального внимания со стороны исследователей, и в первую очередь специалистов по теории языка. Однако приходится сожалеть, что эта книга, написанная на армянском языке, еще не получила распространения за пределами нашей республики. К тому же до сих пор нет необходимого обзора ее на русском языке, который позволил бы читателям хотя бы в общих чертахознако-

1 Գ. Բ. Ջաուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974։